

706. Տապանաքար, վրան՝ 3 տող.

ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ ԵՂԻՍԱՊԵՏԻ ՅԱՐՈՒԹԻՆ.  
ՆԱՏՆ ԿԻՆ ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑԻ ՎԱԽԾ 1879 ԱՄԻ  
ՎԱԽԾ 10:

ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ ԵՂԻՍԱՊԵՏԻ  
ՅԱՐՈՒԹԻՆ/ԵԱՆ. ԿԻՆ ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑԻ.  
ՎԱԽԾ. 1879 ԱՄԻ / [Յ]ՈՒԼԻՍԻ 10:

Լուսանկ. 214

707 Տապանաքար, սև, լավ հղկված մտրմտրից, ուղղանկյունաձև: Հյուսիսային կողմին՝ 4 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՈՍԿԵՐՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ  
ԱՐԹԱՆԱՍԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԵՍՏԻ  
ԾՆԵԱԼ Ի 27՝ ՄԱՅԻՍԻ 1834 ԱՄԻ  
ՎԱԽԾԱՆԵԱԼ Ի 31՝ ՄԱՅԻՍԻ 1905 ԱՄԻ

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ  
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ / ԱՐԹԱՆԱՍԵԱՆ  
ԱԼԷՔՍԱՆԵԱՆԻ / ԾՆԵԱԼ Ի 27-Ն  
ՄԱՅԻՍԻ 1834 ԱՄԻ, /  
ՎԱԽԾԱՆԵԱԼ Ի 31-Ն ՄԱՅԻՍԻ  
1905 ԱՄԻ:

Լուսանկ. 215

### ՄՈՋԴՈԿ

Թերեք գետի ափին գտնվող այս քաղաքը այժմ մտնում է Հյուսիսային-Օսիայի ինքնավար Հանրապետության վարչա-տարածքային կազմում: Եկատերինա Բ կայսրուհու հրամանագրով Ղլլարից այստեղ են տեղափոխվում ավելի քան 2000 հայեր, որոնց շնորհվում է ներքին ինքնավարության կարգավիճակ: Նրանց հիմնական ղրտղմունքը առևտուրն էր և այգեգործությունը: 1794 թ. քաղաքում գործում էին հայկական երկու եկեղեցիներ, իսկ Մ. Բժշկյանի այցելության ժամանակ՝ 4-ը - Ս. Սատվածածին, Ս. Գևորգ, Ս. Ստեփանոս, որը գտնվում էր գերեզմանատանը, և Ս Պետրոս՝ կաթոլիկ հայերի համար<sup>1</sup>:

19-րդ դարում մոզգոկահայերի քանակը հասնում է 4000-ի (ընակչության 30 տոկոսը): Այժմ պահպանված եկեղեցիների մեջ առավել աչքի է ընկնում Ս. Համարաձումը, որն ղբաղեցնում են ուսու հավատացյալները:

1981 թ. տվյալներով՝ Մոզգոկում ապրում էին շուրջ 1000 հայեր:

Հայկական հուշարձանների վրա վիմագրական խմբարչավը ոչ մի արձանագրություն չհայտնարերեց: Տապանագրերի մեծ մասը հետպատերազմյան շրջանից էր:

<sup>1</sup> Մ. Բժշկյան, էջ 411: